աթոռը իրարու ետևէ կը գրաւեն Փիլիպպոս կաթողիկոսի հետևորդներէն Մեծ Ոհան վարդապետ (Յովհաննէս Արղընցի), Տաթևի առաջնորդ Ներսէս վարդապետ և Մուղնեցի Յովհաննէս վարդապետ։ Առաջին երկուքին պաշտօնավարութիւնը շատ կարճատև կ'ըլլայ, վասնզի կը ստիպուին տեղի տալ Յովհաննէս Մուղնեցիին, որ զանազան հնարքներով ինք կը գրաւէ պատրիարքական աթոռը։

Փիլիպպոս կաթողիկոս 10 ամիս և 7 օր կը մնայ Կ. Պոլիս (1652 Յունիս 19 — 1653 Ապրիլ 27)։ Եղիազար ի պատիւ Հոգևորտիրոջ չմնալ տուած էր «գեղեցիկ և մեծամեծ խուցք և տեղի նստելոյ» Սամաթիոյ Ս. Գէորգ, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ և Գումգափուի Ս. Աստուածածին եկեղեցիներուն առընթեր, որոնց մէջ կարգաւ կը բնակի Հայրապետը իր Կ. Պոլիս անցուցած տասնամսեայ ժամանակաշրջանին։ Այդ միջոցին իր ջանքերով ու յորդորներով կը յաջողի վճարել տալ ազգին վրայ ծանրացած 40,000 ղրուշի պարտքը։ Կ'աշխատի մայրաքաղաքի բնիկ ու գաղթական ազգայնոց մէջէն նեռեցիի ու դրսեցիի խտիրը վերցնել։ Ս. Նիկողայոս եկեղեցիին մէջ իր հետևորդ յիշեալ վարդապետներուն (Ոհան, Ներսէս, Յովհաննէս Մուղնեցի) վարդապետական իշխանութեան գաւազան կու տայ։ Ս. Հրեշտակապետի մէջ Պուղտանցի եպիսկոպոս մը կը ձեռնադրէ։ Մեծ Ոհան վարդապետը օրհնութեան կոնդակով Լեհաստան կ'ուղարկէ։ Նաև 1653 Փետրուար 6ին կը պատարագէ Ս. Նիկողայոսի մէջ և Ողջոյնի ատեն միւռոնթափ կը կատարէ, այսինքն միւռոն կը բաշխէ Ս. Աստուածածնի, Ս. Նիկողայոսի և Ս. Սարգսի եկեղեցիներուն արծաթէ ամաններով, զորս բռնած ունէին նոյն եկեղեցեաց աւագերէցները, որոնցմէ Ս. Սարգսի աւագերէցն էր Երեմիայի Հայրը Տէր Մարտիրոս։ Զատկի օրը (1653 Ապրիլ 10) ներկայ